ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռեկտորի հաշվետվություն

2015-2016 ուսումնական տարի



ԵՎՐԱՍԻԱ
միջազգային
համալսարան

www.eiu.am

Մեր ձեռքը դարի զարկերակին է ...

ՆՊԱՏԱԿ 1. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Խնդիր 1.1 Ներդնել իրականացվող կրթական ծրագրերի արդիականացման, բարելավման, գնահատման, ինչպես նաև բուհի կողմից նոր կրթական ծրագրերի իրականացման մեխանիզմներ:

1. Իրականացվող ՄԿԾ-ների վերլուծություններ՝ հիմքում դնելով ԵՄՀ շահակիցների կարիքների հիման վրա խորքային վերլուծությունները: Վեր հանել գործող ՄԿԾ-ների բարելավման ուղիները, ինչպես նաև նոր ՄԿԾ-ների ներդրման հնարավորությունները:

2. Ամբիոնների նիստերում, մեթոդխորհրդում քննարկել և գիտական խորհրդում առաջարկություններ կատարել ՄԿԾ-ների արդիականացման, ինչպես նաև նոր ՄԿԾ-ների ներդրման վերաբերյալ:

Հաշվետվություն

2015-2016 թթ. ընկած ժամանակահատվածում համալսարանը գտնվել է արտաքին ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում, որն ավարտվել է փորձագիտական խմբի կողմից պատրաստված հավատարմագրման զեկույցով: Փորձագիտական զեկույցի հիման վրա Եվրասիա միջազգային համալսարանի կողմից մշակվել է թերությունների վերացման գործողությունների ծրագիր:

Առաջնորդվելով փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրով և «Կրթական ծրագրերի զարգացման և մշտադիտարկման ընթացակարգ»-ով սահմանված պահանջներով, ԵՄՀ-ն նախաձեռնել է Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև Օտար լեզու և գրականություն ամբիոնների կրթական ծրագրերի վերանայման գործընթացը, որն իրականացվել է "Իրավագիտություն" մասնագիտության պիլոտային կրթական ծրագրի օրինակով: Նշված ամբիոններում ռեկտորի հրամանով 2015թ. օգոստոսի 24-ին ստեղծվել են ՄԿԾ-ների վերանայման աշխատանքային խմբեր, իսկ 2015թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել են կրթական և առարկայական ծրագրերի գնահատմանն ուղղված վերապատրաստումներ, հաստատվել է առարկայական ծրագրերի գնահատման գործիքակազմ:

Գնահատման գործիքակազմի հիման վրա հաշվետու ժամանակաշրջանում որակի ամբիոնային գործակալների կողմից գնահատվել են առաջին կիսամյակի առարկայական ծրագրերը՝ համապատասխան նկատառումներ անելով առկա անճշտությունների վերաբերյալ: Գնահատման արդյունքում ծրագրերի մի մասը վերադարձվել է դասախոսներին՝ փոփոխություններ կատարելու նպատակով, որից հետո իրականացվել է այդ ծրագրերի երկրորդ գնահատումը: Ներկայումս գործընթացը շարունակվում է: Ուսանողական խորհրդի որակի ապահովման հանձնախմբի կողմից առարկայական

ծրագրերի գնահատումը սկսվել է 2016թ-ի մայիս ամսին՝ համապատասխան վերապատրաստումներից հետո: Միաժամանակ մշակվել և «Կրթական ծրագրերի զարգացման և մշտադիտարկման ընթացակարգ»-ի մեջ ներառվել է բենչմարքինգի իրականացման մեթոդաբանությունը, որի հիման վրա վերընշված երկու ամբիոններում իրականացվել է կրթական ծրագրերի բենչմարքինգ: Արդյունքում՝ վերաձևակերպվել են մասնագիտությունների կրթական ծրագրերի վերջնարդյունքները և քննարկվել գործատուների հետ հանդիպումների ընթացքում: ՄԿԾ-ների նախագծերի վրա տարվող աշխատանքները ավարտվել են հուլիս ամսին և վերջնական տարբերակները ներկայացվել է գիտխորհրդի հաստատմանը 2016 թ. օգոստոսին:

Կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանացնելու նպատակով նախկինում կնքված 22 հուշագրերին 2015-2016թթ. ավելացել է ևս 3-ը. «Ալվարիում» ընկերության, Իրավաբանների պալատի և «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի հետ:
2015-2016 ուստարում համալսարանը զգալի առաջընթաց ունի ուսման առաջադիմության առումով:

- ✓ Առկա ուսուցման բակալավրի ուսանողների 33% գրանցել է 85% -ից բարձր միջին որակական գնահատական:
- ✓ Առկա ուսուցման մագիստրատուրայում ուսանողների 28% գրանցել է 90% -ից բարձր միջին որակական գնահատական:
- ✓ Նախորդ տարվա համեմատ 2014-2015 ուստարում առկա ուսուցման բակալավրի ուսանողների 44% և մագիստրատուրայի ուսանողների 19% բարելավել է միջին որակական գնահատականը:

2015-2016 ուստարվա աշնանային և գարնանային կիսամյակների արդյունքների հիման վրա ամփոփվեց «Օհանյան կրթաթոշակ»-ը և համալսարանի լավագույն ուսանողները արժանացան ուսման վարձի 10-100% զեղչերի:

Խնդիր 1.2. Ներդնել ուսումնառության որակի շարունակական բարելավման մեխանիզմներ՝ նպաստելով ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների մասնագիտական և մեթոդական որակավորումների բարձրացմանը, ինչպես նաև ընդլայնելով պրակտիկ գործունեության իրականացման հնարավորությունները:

1.Իրականացնել ԵՄՀ մասնագիտական, ընդհանրական և մեթոդական վերապատրաստումներ՝ ուղղված դասախոսների որակավորման բարձրացմանը:

2. Իրավագիտության ամբիոնին կից գործող իրավաբանական կլինիկայի միջոցով նպաստել ԵՄՀ իրավագիտության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների, ուսանողների մասնագիտական որակավոր-ման բարձրացմանը՝ արտաքին շահակիցներին մասնագիտական ծառայությունների մատուցմամբ:

3. Կառավարման և SS ամբիոնին կից ստեղծել բիզնես դպրոց և նրա միջոցով նպաստել ԵՄՀ Կառավարման և SS ամբիոնի դասախոսների, ասպիրանտների, ուսանողների մասնագիտական որակավորման բարձրացմանը՝ արտաքին շահակիցներին մասնագիտական ծառայությունների մատուցմամբ:

4. Օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների, ուսանողների շնորհիվ ԵՄՀ դասընթացների կենտրոնում իրականացնել օտար լեզուների իմացության

բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ՝ դասախոսների ընդհանրական վերապատրաստումների շրջանակներում:

5. Վերապատրաստումներին ներգրավել ԵՄՀ ասպիրանտներին՝ խրախուսելով նրանց համալրումը ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմին:

Հաշվետվություն

Վերանայվել է ԵՄՀ դասախոսների վերապատրաստման կարգը, սահմանվել է դասախոսների վերապատրաստման կրեդիտային եղանակը, կրեդիտների կուտակման և հաշվարկման մեխանիզմները, դասախոսի վերապատրաստման անհատական ծրագրի ձևավորումը, դասախոսի վերապատրաստման ծրագրի կառավարումը, ինչպես նաև ընդհանուր դրույթներ վերապատրաստման ծրագրի կազմակերպման վերաբերյալ:

Նշված ժամանակահատվածում Որակի ապահովման կենտրոնի և Որակի ամբիոնային գործակալների կողմից դասախոսների շրջանում իրականացվել է կարիքի գնահատում, հստակեցվել են այն թեմաները, որոնց շուրջ վերապատրաստումը դասախոսները համարել են հրատապ: Իրականացված կարիքի գնահատման հիման վրա կազմվել է վերապատրաստումների ծրագիրը և ժամանակացույցը, ընտրվել են վերապատրաստողներ:

Միևնույն ժամանակ մշակվել է դասախոսների ուսումնամեթոդական և հասարակական աշխատանքների ինքնագնահատման և ամբիոնի վարիչի կողմից գնահատման ռուբրիկը, ինչպես նաև հետազոտական աշխատանքների գնահատման ռուբրիկը: Մշակված ռուբրիկների և ուսանողների կողմից դասախոսների կիսամյակային հերթական գնահատման արդյունքների հիման վրա իրականացվել է դասախոսների գնահատում և արդյունքների ամփոփում: Այս փուլում ամփոփվել են դասախոսների ուսումնամեթոդական, հասարակական աշխատանքները: Ըստ մշակված համակարգի դասախոսները վարկանիշավորվել են, որը հիմք է հանդիսացել նյութական և ոչ նյութական խրախուսման և հավելավճարի սահմանման համար:

Պրոֆեսորադասախոսական կազմի անընդհատ մասնագիտական կատարելագործման խթանման նպատակով ամբիոնները շարունակում են իրականացնել փորձի փոխանակման և ներքին վերապատրաստման ծրագրեր: Դասախոսները մասնակցում են նաև արտաքին (տեղական և միջազգային) վերապատրաստման ծրագրերի:

Բացի այդ, պրոֆեսորադասախոսական կազմը պարբերաբար մասնակցել է Հայաստանում և արտերկրներում իրականացվող մեթոդական և մասնագիտական տարբեր վերապատրաստումների, առցանց դասընթացների: Համալսարանը 2015-2016թթ. Եվրամիության կողմից ֆինանսավորվող Էրազմուս+ ծրագրի շրջանակներում համագործակցել է 7 բուհերի հետ, որոնց շրջանակներում համալսարանի 15 ուսումնաօժանդակ կազմի աշխատակից և դասախոսներ մասնագիտական վերապատրաստում են անցել եվրոպական համագործակից բուհերում: Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմը պարբերաբար վերապատրաստվել է նաև Tempus IV, Թվինինգ ծրագրերի շրջանակներում, ինչպես Հայաստանում եվրոպացի փորձագետների կողմից, այնպես էլ արտերկրում:

Մասնագիտական վերապատրաստման նպատակով կարևորվում է նաև դասախոսների մասնակցությունը Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի կողմից ամեն տարի իրականացվող գիտաժողովներին, որի արդյունքները տպագրվում են առանձին ժողովածուի տեսքով:

Համալսարանում շարունակում է գործել Իրավագիտության ամբիոնին կից իրավաբանական կլինիկան, որի միջոցով ապահովվել է ԵՄՀ իրավագիտության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների մասնագիտական որակավորման բարձրացումը՝ արտաքին շահակիցներին մասնագիտական ծառայությունների մատուցման, սեմինարների, վարպետության դասերի կազմակերպման միջոցով: 2015-2016 ուս.տարվա ընթացքում կազմակերպվել է 5 վարպետության դաս գործատուների, մասնավորապես՝ ԷյԴիԱր Փարթներս մեդիացիոն ընկերության և Հայաստանի Գործատուների Հանրապետական Միության, ՀՀ գլխավոր դատախազության վերահսկողական-տեսչական բաժնի աշխատակիցների, ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդի անդամների և ամբիոնի կողմից: Շարունակում է համագործակցությունը Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, մասնավորապես Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի և իրավաբանական բաժնի հետ:

Խնդիր 1.3. Ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին համակարգի բարելավում:

1.ԵՄՀ առաքելության, արժեքների, ռազմավարության, որակի ապահովման քաղաքականության հիման վրա մշակել ԵՄՀ ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին կանոնակարգված քաղաքականություն (միասնական փաստաթղթի տեսքով):

2.Հստակեցնել և ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին քաղաքականությանը համապատասխանեցնել գործընթացի իրականացման համար առկա գործիքները (կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլն):

3.Բարելավված գործիքների միջոցով իրականացնել ուսուցման որակի ապահովման և գնահատման մոնիտորինգ (օրինակ՝ ուսանողների կողմից դասախոսի գնահատում, պետական քննությունների արդյունքում հանձնաժողովի նախագահի կարծիք, դասընթացների գնահատում և այլն):

Հաշվետվություն

2015-2016թթ-ին համալսարանի ներքին որակի ապահովման համակարգի հետագա բարելավման նպատակով վերանայվել են համալսարանի գործող մի շարք կանոնակարգեր, ընթացակարգեր, մշակվել են նոր փաստաթղթեր, այդ թվում՝ Որակի ապահովման ուղեցույցը, կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման գործիքակազմը: Ներդրվել են ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին համակարգի առկա բոլոր փաստաթղթերը և գործիքակազմը:

ՆՊԱՏԱԿ 2. ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Խնդիր 2.1. Նպաստել ԵՄՀ գիտահետազոտական ներուժի և նորարարությունների զարգացմանը:

1. Վերաբրենդավորել հետազոտական կենտրոնը՝ առավել ճանաչելի դարձնելով գիտական հանրույթի և քաղաքականություն մշակողների շրջանում:
2. Բարձրացնել ԵՄՀ հետազոտական կենտրոնի դերը կիրառական հետազոտությունների մեջ՝ արդյունքները ներդնելով կրթական ոլորտում, ինչպես նաև ապագայում ներկայացնելով իբրև պետական քաղաքականու-թյունների բարելավման ուղղությամբ առաջարկներ
3. Տրամադրել թեմատիկ դրամաշնորհներ ԵՄՀ գիտահետազոտական կենտրոնի միջոցով՝ ԵՄՀ և/կամ այլ բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների, ուսանողների հետազոտական գործունեության խթանման նպատակով:
4. Նպաստել օտարերկրյա և տեղական դոնոր կազմակերպություններից դրամաշնորհների ներգրավմանը և դրանց միջոցով հետազոտական աշխատանքների իրականացմանը
5. Հետևողականորեն բարձրացնել ԵՄՀ հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպվող ամենամյա գիտաժողովների ճանաչելիությունը՝ նպաստելով թե՛ հայրենակից, թե՛ օտարերկրյա մասնակիցների թվաքանակի ավելացմանը:
6. Խրախուսել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական ակտիվությանը՝ դասախոսների վարկանշային սանդղակի և տարբերակված վճարման համակարգի կիրառման միջոցով:
7. Խրախուսել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի նորարարական նախաձեռնություններին՝ դասախոսների վարկանշային սանդղակի և տարբերակված վճարման համակարգի կիրառման միջոցով:
8. Նպաստել ԵՄՀ դասախոսների կողմից մասնագիտական և մեթոդական հետազոտությունների իրականացմանը և դրանց արդյունքների ներդրմանը ուսումնական գործընթացներում:

Հաշվետվություն

Կարևորելով հետազոտական ոլորտի զարգացման անհրաժեշտությունը Ռազմավարական ծրագրի վերանայման ընթացքում ԵՄՀ-ն իրականացրել է «Գիտական ներուժի կայուն զարգացում, հետազոտությունների և նորարարությունների կիրառելիության ապահովում» նպատակի իրագործման խնդիրների ու գործողությունների հստակեցում: Վերանայվել են հետազոտական ոլորտի զարգացման թեմատիկ ուղղությունները՝ դրանք համապատասխանեցնելով ամբիոնների կողմից սահմանված ծրագրերին:

Սահմանված թեմատիկ ուղղություններով կազմակերպվել են դասախոսների գիտագործնական սեմինարներ, գիտաժողովներ, տրամադրվել են ներբուհական հետազոտական դրամաշնորհներ: 2016թ. գարնանը հայտարարված ներքին գիտահետազոտական դրամաշնորհների մրցույթի արդյունքում ֆինանսավորվել են դասախոս-ուսանող համատեղ հետազոտություններ կատարելու երկու հայտեր հետևյալ թեմաներով՝

- Անձի իրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության փոփոխված սահմանադրության համատեքստում և
- Հանքարդյունաբերության ոլորտում առկա հիմնախնդիրները /"Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ օրինակով/

Նույն գործընթացների շրջանակներում 2016թ. հունիսի 16-ին իրականացվել է գիտաժողով «Ուսուցման մեթոդներ և կրթական վերջնարդյունքներ» թեմայով, որին մասնակցել են ինչպես ԵՄՀ, այնպես էլ այլ բուհերի դասախոսներ, ԵՄՀ ուսանողներ: Զեկույցներն ընդգրկում էին բարձրագույն մասնագիտական կրթության նոր մշակույթին, ուսուցման վերջնարդյունքների ներդրմանը, փիլիսոփայական և մեթոդաբանական, գիտելիքների գնահատմանն առնչվող հիմնահարցեր:

2015-2016 թթ. կարևոր ձեռքբերումներից էր նաև Եվրասիա միջազգային համալսարանի, ԱՄՆ Ստոունհիլ քոլեջի և Եվրասիա համագործակցության հիմնադրամի կողմից համատեղ իրականացվող միջազգային գիտաժողովը՝ «Համընդհանուր խաղաղության տեղական արմատները» թեմայով: Մինչ գիտաժողովի սկիզբը 2016թ. հունիսի 13-ից 25-ը Եվրասիա միջազգային համալսարանը և ԱՄՆ Ստոունհիլ քոլեջը կազմակերպեցին համատեղ ամառային դպրոց՝ «Համընդհանուր անվտանգության ուսումնասիրություններ» թեմայով: Ամառային դպրոցը նախատեսված էր երկու համալսարանների թվով 10 հետազոտողների համար, որոնք իրենց աշխատանքների արդյունքները ներկայացրեցին և քննարկեցին «Համընդհանուր խաղաղության տեղական արմատները» թեմայով գիտաժողովի ընթացքում:

«Համընդհանուր խաղաղության տեղական արմատները» թեմայով միջազգային գիտաժողովն իրականացվեց 2016թ. հունիսի 24-ից 25-ը՝ Եվրասիա միջազգային համալսարանում: Գիտաժողովին ներկայացվել էին 27 զեկույց Հայաստանից, Գերմանիայից, Շվեդիայից, Լեհաստանից, Ղրղզստանից, Թուրքիայից, Ալբանիայից, Սերբիայից, ԱՄՆ-ից: Գիտաժողովին իրենց զեկույցներն էին ներկայացրել նաև ԵՄՀ Իրավագիտության, Օտար լեզուների և գրականության ամբիոնների 3 դասախոս, ինչպես նաև Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի 3 ուսանող (ուսանողների համատեղ զեկույց): Գիտաժողովի ընթացքում կազմակերպվել են առանձին քննարկումներ և վարպետության դասեր՝ կապված հետազոտական հմտությունների զարգացման հետ: Ներկայացված զեկույցները հրապարակվել են առանձին ժողովածուի տեսքով: Գիտաժողովի հարգարժան հյուրերն էին ՀՀ ԿԳ նախարար՝ Լևոն Մկրտչյանը և Հայաստանում ԵՄ դեսպան՝ Պյոտր Սվիտալսկին: Գիտաժողովը կրում է պարբերական բնույթ:

Համատեղ հետազոտությունների ակտիվացման համար Էրազմուս+ ծրագրի շրջանակներում կնքվել են փոխանակման նոր պայմանագրեր, որոնք հնարավորություն են տալիս ԵՄՀ ասպիրանտներին և դասախոսներին կատարել այցեր համագործակից բուհեր և կատարել հետազոտական աշխատանքներ: Նշված թիրախային խմբի աշխատանքները նոր պայմանագրերի շրջանակներում կսկսվեն 2016թ. սեպտեմբերից և մասնակիցները կակտիվացնեն նաև համատեղ հետազոտական աշխատանքները:

Խնդիր 2.2. Նպաստել հետազոտական և նորարարական նախաձեռնություններում ԵՄՀ ուսանողների ներգրավվածության մեծացմանը:

1. Հետևողականորեն բարձրացնել ԵՄՀ հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպվող ամենամյա ուսանողական գիտաժողովների դերը՝ նպաստելով ԵՄՀ մասնակիցների թվաքանակի ավելացմանը:

2. Նպաստել ուսանողական խորհրդի գիտական թևի ակտիվացմանը, խրախուսել նրանց կողմից գիտական նախաձեռնությունների իրականացմանը:
3. Խրախուսել ԵՄՀ ուսանողների նորարարական նախաձեռնությունների իրականացմանը:

Հաշվետվություն

Հետազոտական ծրագրերում ուսանողների ակտիվ մասնակցությունն ապահովելու, կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչն ավելացնելու և համապատասխան կարողությունները զարգացնելու նպատակով, մշակվել է ուսանողների մոտ ձևավորված հետազոտական կոմպետենցիաների գնահատման ռուբրիկ: Ռուբրիկը հնարավորություն է տալիս գնահատել ուսանողի հետազոտական կարողությունները յուրաքանչյուր առարկայի շրջանակներում և դրան համապատասխան փոփոխություն կատարել Ուսանողի գիտելիքի, կարողությունների և հմտությունների գնահատման կանոնակարգում: Համաձայն նշված փոփոխությունների բոլոր առարկաների համար սահմանվում են գնահատման հետևյալ բաղադրիչները՝ միջանկյալ (25%) և վերջնական քննությունները (35%), ներկայությունը (5%), լսարանային ակտիվ մասնակցությունը (15%, որտեղ 5%-ը նախատեսվում է հետազոտական կարողությունների գնահատման համար՝ մշակված ռուբրիկի հիման վրա(Հավելված 6.8), և արտալսարանային աշխատանքը (20%):

2015թ. դեկտեմբերին ԵՄՀ-ում տեղի է ունեցել ամենամյա ուսանողական գիտաժողովը, որի ընթացքում զեկույցներ՝են ներկայացրել ինչպես ԵՄՀ, այնպես էլ փոխանակման ծրագրով համալսարանում ուսումնառող Տուչիայի համալսարանի, Վ.Սարգսյանի անվան Ռազմական ինստիտուտի և Արցախի պետական համալսարանի երեք ուսանող:

ՆՊԱՏԱԿ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Խնդիր 3.1. Խթանել ԵՄՀ միջազգային կրթական, գիտական և այլ համագործակցային ծրագրերի ավելացմանը:

1.Իրականացնել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և ուսանողների օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ՝ միջազգային համա-գործակցային ծրագրերում ներգրավվածության ընդլայնման նպատակով:

2.Ընդլայնել միջազգային համագործակցությունը օտարերկրյա շահակիցների (բուհերի, հետազոտական կազմակերպությունների, հասարակական կառույցների, պետական մարմինների, գործարար միջավայրի և այլնի) հետ՝ նպաստելով արտերկրում ԵՄՀ ճանաչելիության բարձրացմանը, գիտակրթական տարածքներում ինտեգրմանը:

3. Նպաստել ԵՄՀ դասախոսների, ասպիրանտների կողմից միջազգային գիտական և նորարարական նախագծերում ինտեգրմանը:

4. Ներգրավվել միջպետական համաձայնագրերում, դրամաշնորհային ծրագրերում՝ նպաստելով ԵՄՀ-ում ուսուցանող օտարերկրյա ուսանողների և ասպիրանտների թվաքանակի ավելացմանը:

Հաշվետվություն

Եվրասիա միջազգային համալսարանը 2015-16 թթ. շարունակել է իր համագործակցությունը «Հարմոնիա» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է բարձրացնել բարձրագույն կրթության գրավչությունը, բարձրագույն ուսումնական հաստատությունները դարձնել բարձրագույն կրթական համակարգի, հետազոտության եւ նորարարության բնագավառների իրադարձությունների գերազանցության կենտրոններ՝ համաշխարհային իրադարձությունների համատեքստում՝ նշված ոլորտներում ազգային ռազմավարության համաձայն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել միջազգայնացման և նորարարության բնագավառների զարգացման ընդգրկուն ռազմավարություն, հստակեցնել միջազգային համագործակցության ուղղություններն ու գերակայությունները: Ծրագրի շրջանակներում արդեն իսկ իրականացվել են կոնսորցիումի անդամների հանդիպումներ Իսպանիայում և Անգլիայում, հստակեցվել է ԵՄՀ դերը, ըստ որի ԵՄՀ-ն պատասխանատու կլինի ծրագրում ներգրավված բոլոր բուհերի շրջանում իրականացվող քանակական և որակական հետազոտությունների արդյունքների վերլուծության համար: Հետազոտության իրականացման համար Բելոռուսի պետական և Իսպանիայի Սեվիլիա համալսարանների կողմից արդեն իսկ մշակվել է ընդգրկուն հարցաշար, որն այժմ քննարկման և վերամշակման փուլում է: Հետազոտությունն ուղղված է գործընկեր երկրների միջազգայնացման և նորարարության ոլորտներում առկա հիմնախնդիրների բացահայտմանը և ներգրավված եվրոպական բուհերի լավագույն փորձի տեղայնացմանը:

Խնդիր 3.2. Ընդլայնել ԵՄՀ ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների և վարչական աշխատակիցների շարժունակության հնարավորությունները դեպի օտարերկրյա գործընկեր բուհեր և այլ շահակից կազմակերպություններ և հակառակը:

1.Նպաստել ԵՄՀ միջազգային դրամաշնորհային ծրագրերի թվաքանակի ավելացմանը՝ հիմքեր ապահովելով ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների, վարչական աշխատողների, ուսանողների շարժու-նակությունների ավելաց-մանը՝ որակավորման բարձ-րացման նպատակներով:

2.Նպաստել պրոֆեսորադա-սախոսական կազմի և ասպիրանտների գիտական և ճանաչողական այցելու-թյունների, գիտական համագործակցությունների, միջազգային գիտաժողովների մասնակցության աստիճանի բարձրացմանը՝ ԵՄՀ միջազգային համագործակցային ծրագրերի շրջանակներում:

Հաշվետվություն

Եվրասիա միջազգային համալսարանը 2015-16 թթ. շարունակել է ակտիվ ջանքերը միջազգային համագործակցության ակտիվացման, նոր ծրագրերի կյանքի կոչման և նոր գործընկերների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Համալսարանը Էրազմուս պլյուս ծրագրի շրջանակներում կնքել է փոխանակման 7 ծրագիր, այդ ցուցանիշով զիջելով հանրապետության հաշված ԲՈՒՀ-երի:

ԵՄՀ-ի եւ գործընկեր համալսարանների համագործակցության արդյունքում 2015-2016թթ ուստարում հասանելի են եղել փոխանակման 7

ծրագիր հետևյալ համալսարաններում.

1. Վարշավայի բնական գիտությունների համալսարանը (Warsaw University of Life Sciences),
2. Վարշավայի տնտեսագիտության համալսարանը (Warsaw School of Economics),
3. Թուրքիայի մերձավոր արևելքի համալսարանը (Middle-East University in Turkey),
4. Չեխիայի Մասարիկ համալսարանը (Masaryk University)
5. Վիլնյուսի Միկոլաս Ռոմերիս համալսարանը (Mykolas Romeris University),
6. Տեսալոնիկի Արիստոտել համալսարան (Aristotle University of Thessaloniki)
7. Վալենսիայի համալսարան, Իսպանիա (University of Valencia)

Համագործակցության և փոխանակման երկկողմ պայմանագիր է ստորագրվել Վիլնյուսի պետական համալսարանի հետ, որի համաձայն կողմերը նյութական աջակցություն են ցուցաբերում փոխանակմանը մասնակցող ուսանողներին, ասպիրանտներին, դասախոսներին և վարչական աշխատակիցներին:

Հաշվետու ժամանակահատվածում Եվրասիա միջազգային համալսարանում 6ամիս իրենց ուսումնառություն են իրականացրել օտարերկրյա համագործակից համալսարանների 4 ուսանող, որոնցից մեկական ուսանող Իտալիայի Տուչիայի և Վիլնյուսի պետական համալսարաններից, իսկ 2-ը՝ ԱՄՆ Ստոնհիլ քոլեջից:

ՆՊԱՏԱԿ 4. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏԱՎՈՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ:

Խնդիր 4.1. Նպաստել ԵՄՀ ֆինանսական անկախության բարձրացմանը՝ դեպի ԵՄՀ հոսող ֆինանսական մուտքերի կայունության և դիվերսիֆիկացիայի միջոցով:

1.Նպաստել ԵՄՀ ընդունելության բարձրացման կայուն հենքի ձևավորմանը՝ ընդլայնելով համագործակ-ցությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ:

2. Նպաստել ԵՄՀ ընդունելության բարձրացման կայուն հենքի ձևավորմանը՝ Եվրասիա և Օհանյան վարժարանների շրջանավարտների շնորհիվ:

3. Նպաստել դեպի ԵՄՀ օտարերկրյա ուսանողների ներհոսքին՝ մարքեթինգի, անհրաժեշտ ընթացակարգերի մշակման, ներդրման, թարգմանության և հասանելիության ապահովման միջոցով:

4. Նպաստել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից գիտական և այլ նախագծերի իրականացմանը՝ պետական, դոնոր, սփյուռքի և այլ կազմակերպություններից ֆինանսական

միջոցների ներգրավման միջոցով:

Հաշվետություն

2014-2018թթ. Ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակներն իրականացնելու համար Եվրասիա միջազգային համալսարանի Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնը իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք նպատակ են հետապնդել մեծացնելու համալսարան ընդունվող դիմորդների և վարժարան ընդունվող աշակերտների թիվը: Իրականացվել են պրեզենտացիաներ դպրոցներում, քոլեջներում, հեռուստատեսությամբ և ռադիոյով սփռվել են զանազան հայտարարություններ և ներկայացվել համալսարանի կյանքին առնչվող գլխավոր իրադարձություններում, կանոնավոր կարգով իրականացվել են ամենամյա «Քայլ առաջ» ծրագրով նախատեսված թրեյնինգները և ամփոփիչ մրցույթը: Հաշվետու ժամանակաշրջանում «Քայլ առաջ» նախագիծը ԿԳ նախարարի հրամանով դիտվել է որպես լրացուցիչ կրթական ծրագիր և երաշխավորվել է անցկացնել ավագ դպրոցներում: Ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի 10 դպրոցներում անց է կացվել փափուկ հմտությունների զարգացման վերաբերյալ սեմինարներ, որոնց ակտիվ մասնակցություն են ունեցել համապատասխան դպրոցների բոլոր 9-րդ դասարանցիները: Կազմակերպված թրեյնինգների մասնակիցների ընդանուր թիվը կազմել է 420 աշակերտ, իսկ մրցույթային փուլին մասնակցել են 77 աշակերտ 10 դպրոցներից:

Բացի այդ, վարժարան և համալսարան ընդունվել ցանկացող անձանց համար կազմակերպվել և իրականացվել է «Քայլ առաջ» ամառային դպրոցը, որի նկատմամբ մեծ հետաքրքրություն են դրսևորել համագործակից դպրոցների9-րդ և 10-րդ դասարանների աշակերտները:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է Երևան քաղաքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի քոլեջների աջակցման ծրագիր: Ծրագրի շրջանակներում Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի և մասնագիտական ամբիոնների դասախոսների համատեղ ջանքերով կազմակերպվել են մասնագիտական սեմինար-պարապմունքներ 100-ից ավել ուսանողների համար:

Խնդիր 4.2. Նպաստել ԵՄՀ ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ ԵՄՀ ռազմավարական նպատակներին համապատասխան:

1.Մշակել ԵՄՀ միջնաժամկետ ֆինանսական ծրագիր (մինչև 3 տարի) ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման և ռազմավարական ծրագրին համապատասխան և ներկայացնել

հաստատման կառավարման խորհրդին:

2. Մշակել ԵՄՀ տարեկան բյուջե ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման և ռազմավարական ծրագրին համապատասխան և ներկայացնել հաստատման կառավարման խորհրդին:

3.Իրականացնել բյուջեի կատարման կիսամյակային մշտադիտարկում:

4. Իրականացնել բյուջեի վերանայում՝ ռեկտորի առաջարկով և կառավարման խորհրդի որոշմամբ:

5. Հրապարակել ԵՄՀ բյուջեի կատարման ցուցանիշները ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ և պաշտոնական կայքէջում:

Հաշվետություն

2015-2016 թթ. դրամական մուտքերը կազմել են շուրջ 109 մլն. դրամ (5 մլն դրամ ավել ծրագրայինից), իսկ ելքերը՝ 104 մլն. դրամ: Ոչ գործառնական եկամուտների գծով բուհը ծրագրայինից (6 մլն) շուրջ երեք անգամ ավելի եկամուտ է ստացել (18 մլն.), այդ թվում բարեգործական, դրամաշնորհային եկամուտներից: Շուրջ 10 մլն դրամ եկամուտ է ստացվել հյուրատան ծառայություններից: Նշյալ ուղղություններով մուտքերի ապահովման համար ստորաբաժանումները շարունակում են կատարել նպատակային աշխատանք ապահովելու ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացում: Դրամական ելքերի շուրջ 60% -ը աշխատանքային վարձատրություններ են և դրան համարժեք ծախսեր, ներառյալ հարկային գործակալի հարկերը, 8 % ուղղվել է կոմունալ վճարներին, 2%՝ ապրանքանյութական պաշարների և կապիտալ ներդրումների ծախսերին, 8%՝ ծառայությունների ձեռքբերման ուղղությամբ կատարվող ծախսերին, 8%՝ վարկի մարմանը (անտոկոս փոխառու միջոցների և ժամանակավոր ֆինանսական օգնության):

Խնդիր 4.3. Նպաստել ԵՄՀ ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված ենթակառուցվածքների ապահովմանը և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

1.Վեր հանել ուսանողների, ասպիրանտների և դասախոսների կարիքները և համալրել ԵՄՀ գրադարանի էլեկտրոնային և տպագիր ռեսուրսները:

2. Վեր հանել ուսանողների և դասախոսների կարիքները և բարելավել ԵՄՀ լսարանային կահավորումը:

3. Վեր հանել ուսանողների և դասախոսների կարիքները և բարելավել ԵՄՀ ածանցյալ ենթակառուցվածքները (բուֆետ, համակարգչային լսարան, ինտերնետ, սան հանգույցներ և այլն):

4. Բարելավել ԵՄՀ ջեռուցման համակարգը:

Հաշվետվություն

Կրթական ծրագրերի իրականացումն ապահովվում է գրադարանային ֆոնդով և տվյալների բազայով հիմանական կրթական ծրագրերի դասընթացների ցանկի բովանդակությանը համապատասխան: Գրադարանում թղթային և էլեկտրոնային տարբերակներով առկա են

ուսումնական պլանին համապատասխան դասընթացների համար նախատեսված հիմնարար դասագրքեր, պրակտիկումներ, օրենսգրքեր, նորմատիվ իրավական ակտերի ժողովածուներ և այլ ուսումնական ձեռնարկներ: Ուսումնական նյութերի թարմացման նպատակով Համալսարանի գրադարանը ակտիվորեն համագործակցել է ամբիոնների հետ, որի արդյունքում թարմացվել է գրադարանային ֆոնդը, թվայնացվել և համալրվել է 150-ից ավել դասագրքեր և այլ ուսումնական նյութեր:

ԿԾ իրականացման ընթացքում հրապարակվող պարբերականներից և հետազոտական նյութերից օգտվելու նպատակով ԵՄՀ-ն շարունակել է անդամակցել Հայաստանի Էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումին (ՀԷԳԿ), ունի միջազգային SPRINGER, EBSCO էլեկտրոնային գրադարանային ցանցերից և DUKE-ի համալսարանի կողմից հրատարակած ամսագրերից օգտվելու հնարավորություն: Միջգրադարանային բաժնույթից օգտվելու համար համալսարանը պայմանագրեր ունի նաև Հայաստանի Ազգային գրադարանի, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հետ, ունի Միավորված Ազգերի Կազմակերպության նյութերի ու հրատարակությունների անկյուն: Գրադարանի և համակարգչային լսարանի համակարգիչներն ապահովում են համապատասխան տեղեկատու համակարգերի տեղեկատվական բազաներից օգտվելու հնարավորություն (Arlis, DataLex և այլն):

2015-2016թթ. գրադարանային ֆոնդը համալրվել է 82 նոր գրքերով, որոնց հիմնական մասը նվիրաբերվել է համագործակից կազմակերպությունների, այդ թվում «Այ-Դի-Ար» Փարտնրս ՍՊԸ-ի և ՄԱԿ-ի գրասենյակի կողմից: Վերափոխվել է Մուդլ վիրտուալ լսարանի վերկայքը, կանոնակարգվել, ավելացվել և թարմացվել են նյութերն ու ծրագրերը:

Ենթակառուցվածքների և ռեսուրսների ապահովման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ՀԱՐՄՈՆԻԱ Էրազմուս + ԵՄ ծրագրի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ միտված կարողությունների զարգացմանը, ըստ որի նախապատրաստվել է անհրաժեշտ գնումների ցանկը և նախապատրաստական աշխատանքներ են կատարվել անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերման համար:

ՆՊԱՏԱԿ 5. ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Խնդիր 5.1. Ներդնել որակի մշակույթի տարածմանը նպաստող կառավարման արդյունավետ մեխանիզմներ:

1.Մշակել և ԵՄՀ կառավարման խորհրդում հաստատել ռազմավարական ծրագիրը, որը ներառում է ԵՄՀ առաքելությունը, երկարաժամկետ նպատակները և դրանց իրականացման ուղիները:

2. ԵՄՀ ռազմավարական ծրագրին կից մշակել և ԵՄՀ կառավարման խորհրդում հաստատել ԵՄՀ գործողությունների ծրագիրը:

3. ԵՄՀ գործողությունների ծրագրին կից մշակել և ԵՄՀ կառավարման խորհրդում հաստատել ԵՄՀ միջնաժամկետ (մինչև երեք տարի) գործողությունների ծրագիրը:

4. ԵՄՀ միջնաժամկետ գործողությունների ծրագրին կից մշակել և ԵՄՀ կառավարման խորհրդում հաստատել ԵՄՀ տարեկան գործողությունների ծրագիրը՝ ըստ ԵՄՀ ստորաբաժանումների:

5.Իրականացնել ԵՄՀ ներքին գործառույթների մոնիտորինգ՝ վեր հանելով պլանավորված և իրականացված գործառույթների միջև շեղումները և դրանց պատճառները և ներկայացնել ռեկտորատի քննարկմանը:

6.Ներդնել ներքին գործընթացների իրականացման էլեկտրոնային համակարգ:

Հաշվետվություն

Որակի ապահովման ուղեցույցի ամբողջական կիրարկումն ապահովելու նպատակով, նշանակվել են Որակի ապահովման ամբիոնային գործակալներ, Ուսանողական խորհրդում ընտրվել է Որակի ապահովման ուսանող-գործակալ, ով հավաքագրել է որակի ապահովման հանձնախումբ: Ընտրված բոլոր գործակալները ակտիվորեն ներգրավվել են Առարկայական ծրագրերի գնահատման գործընթացում՝ գնահատելով ծրագրերի համապատասխանությունը ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված չափանիշներին: Առարկայական ծրագրերի գնահատման գործընթացին մասնակցել են նաև ուսանողները՝ ՈՒԽ Որակի ապահովման հանձնախմբի միջոցով՝ գնահատելով ծրագրերը ըստ ՈԱ կենտրոնի կողմից ներկայացված չափանիշների:

Հաշվետու ժամանակաշրջանում արտաքին շահակիցների հետ կապի ամրապնդման առումով, համալսարանն իրականացրել է մի շարք նախաձեռնություններ. կրթական ծրագրերի բարելավման նպատակով կազմակերպվել են հանդիպումներ գործատուների հետ՝ երեք մասնագիտական ամբիոններում առանձին, վերակազմավորվել է շրջանավարտների միությունը, հստակեցվել են միության առջև դրված խնդիրները:

Խնդիր 5.2. Բարձրացնել ԵՄՀ գործունեության թափանցիկությունը՝ ներդնելով բուհի կողմից շնորհվող որակավորումների, գիտահետազոտական աշխատանքների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ հաշվետվողականության մեխանիզմներ:

1.Հրապարակել ԵՄՀ կողմից իրականացվող կրթական ծրագրերի և առարկայական ծրագրերի նկարագրերը, նպատակները և վերջնարդյունքները:

2.Ապահովել ԵՄՀ ընդունված ուսանողների՝ ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը, ծանոթացնել նրանց իրենց իրավունքներին ու

պարտականություններին:

3. ԵՄՀ գիտական կենտրոնի կողմից կազմակերպվող գիտաժողովի արդյունքները հրապարակել ԵՄՀ տարեգրքով:

4.Հրապարակել ԵՄՀ ռեկտորի տարեկան հաշվետվությունը:

Հաշվետվություն

Ըստ որակի ապահովման ուղեցույցի ԵՄՀ ՈԱ կենտրոնի կողմից տարեկան ինքնավերլուծության նպատակով իրականացվում է ամենամյա հարցում շահակիցների շրջանում, որտեղ գնահատվում են նաև տարբեր գործընթացների, ինչպես նաև դրանց վերաբերյալ տարածվող տեղեկատվության որակը: ԵՄՀ Որակի ապահովման ուղեցույցում հստակեցվել են բոլոր գործընթացները, վերամշակվել է հարցաթերթը՝ պատրաստվելով տարեվերջյան ամփոփման և մասշտաբային հարցման իրականացմանը:

ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնը վերանայել է պլանավորման և հաշվետվության առկա ձևաչափը՝ ապահովելու առավել հասկանալի, նպատակային և հեշտացված ձևաչափ: 2016թ-ից բոլոր տարեկան պլանները կազմվում են ԵՄՀ Ռազմավարական ծրագրից բխող և մշակված նոր ձևաչափին համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում վերափոխվել է ԵՄՀ պաշտոնական կայքէջը, թարմացվել է էջի գործիքակազմը և տարածվող տեղեկատվությունը: Կայքէջում տեղադրված են շնորհվող որակավորումների նկարագրերը, վերջնարդյունքները և դիմորդներն ունեն կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության ստացման ազատ հնարավորություն:

ԵՄՀ ամենամյա գիտական համաժողովի արդյունքները տարածվում են պաշտոնական կայքէջի միջոցով, իսկ հրատարակված հոդվածները տեղադրվում են կայքում առանց ծածկագրի: հոդվածները հրատարկվում են նաև տպագիր ժողովածույում, որը անվճար տրամադրվում է ՀՀ բոլոր գրադարաններին և գիտական կառույցներին: Կայքէջում ներկայացված են նաև Համալսարանի միջազգային ծրագրերը, համագործակից բուհերը և այդ ծրագրերին մասնակցելու վերաբերյալ տեղեկավությունը սահմանված ժամկետների շրջանակներում:

Համալսարանի գործունեության թափանցիկության ապահովման նպատակով համալսարանի բոլոր նորմատիվ փաստաթղթերը, ինչպես նաև Ռազմավարական ծրագիրը, գործողությունների ծրագիրը և ռեկտորի ամենամյա հաշվետվությունը բաց տեղադրվում են համալսարանի պաշտոնական կայքէջում՝ Որակի ապահովման "Փաստաթղթեր" բաժնում:

Խնդիր 5.3. Նպաստել ԵՄՀ հասարակական պատասխանատվությունն իրացնող մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը:

1.Իրականացնել մասնագիտական կողմնորոշ-ման միջոցառումներ դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

2. Իրականացնել որակավորման բարձրացմանն ուղղված մասնագիտական և մեթոդական վերապատրաստումներ ՀՀ այլ բուհերի դասախոսների, ասպիրանտների համար:

3. Ընդլայնել գիտական հանրույթին և պետական քաղաքականություն մշակողներին մատուցվող հասարակական ծառայությունների տեսակները:

4. ԵՄՀ իրավաբանական կլինիկայի գործունեությամբ իրականացնել իրավաբանական մասնագիտական խորհրդատվություն ֆիզիկական և իրավաբանական անձանց:

5. ԵՄՀ բիզնես դպրոցի միջոցով իրականացնել հասարակական տարբեր խմբերի համար նախագծեր (վերապատրաստումներ, բիզնեսի խորհրդատվություն, ամառային դպրոցներ և այլն):

6. ԵՄՀ ուսանողների, դասախոսների, վարչական աշխատողների հետ համատեղ պարբերաբար իրականացնել կամավորական աշխատանքներ, բարեգործական նախաձեռնություններ և այլն՝ իբրև ԵՄՀ ներքին մշակույթի դրսևորում:

Հաշվետվություն

Համալսարանի հասարակական պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև աշակերտների հետազոտական և նախագծային հմտությունների զարգացման, ազգային-հայրենասիրական ոգով դաստիարակության և մոտիվացված ուսուցման նպատակով 2016թ. ապրիլին կազմակերպվել է աշակերտական գիտաժողով «Կիլիկյան Հայաստանի դերը հայկական պետականության կայացման գործում» թեմայով: Գիտաժողովը իրականացվել է երեք փուլով, որի առաջին փուլում ներկայացվել 68 հայտ, 35 դպրոցներից: Մասնագիտական հանձնաժողովի կողմից գիտաժողովին հանդես գալու համար ընտրվել է 30 զեկույց: Լավագույն 21 աշխատանքներն անցել են 3-րդ փուլ և հրատարակվել են առանձին ժողովածուի տեսքով:

Համալսարանի հասարակական պատասխանատվության բարձրացմանն էին ուղղված նաև վերը նշված «Քայլ առաջ» ծրագիրը, ամառային դպրոցը և քոլեջների աջակցման ծրագիրը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել է ամենամյա Կարիերայի օրեր հմտությունների զարգացման ամենամյա նախագիծը Համալսարանի և Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի, Երիտասարդներ հանուն

ապագայի և Էպեկա երիտասարդական խմբի հետ համատեղ: Ներգրավված են եղել Երևանի տարբեր բուհերի թվով 39 ուսանողներ և շրջանավարտներ:

2016թ. հունիս-հուլիս ամիսներին Ալվարիում ընկերության հետ համատեղ կազմակերպվել է հաջողակ ձեռներեց ծրագիրը 40 մասնակիցների համար, որի ավարտին ներկայացվել է 11 բիզնես պլանի նախագծեր:

«AIESEC» ՀԿ-ի և Կենտրոնական բանկի հետ համատեղ տվյալ ժամանակահատվածում կազմակերպվել է թվով 3-րդ «Երիտասարդների ֆինանսական գրագիտություն» 1-ամսյա դասընթացը ուսանողների, շրջանավարտների և աշակերտների շրջանակում, որին մասնակցել են ընդհանուր առմամբ 42 անձ:

Հաշվետու ժամանակաշրջանում 12 ուսանող ներգրավվել է կամավորական աշխատանքներում՝ Գործատուների հանրապետական միությունում, «Արմենթել», Ռոսգոսստրախ և մի շարք այլ ընկերություններում: Համալսարանի 3 ուսանողուհիներ մրցույթային կարգով մասնակցել են ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպված Կանանց մենթորական ծրագիր 2016-ին:

Հաստատում եմ

05.06.2017 թ.

ԵՄՀ Կառավարման խորհրդի նախագահ՝ Սամվել Պիպոյան